ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մայիսի 2023 թվականի N 829 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱ-ԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի N 562-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի «Պետական գույքի էլեկտրոնային հաշվառման և գրանցամատյան վարելու կարգը հաստատելու մասին» N 562-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Պետական կառավարման համակարգի մարմինների (այսուհետ՝ պետական մարմիններ) ղեկավարներին և մարզպետներին՝ սույն որոշմամբ հաստատված կարգով ապահովել հաշվառման ենթակա գույքի, ինչպես նաև իրենց ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպություններին, 100 տոկոս պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին և հիմնադրամներին սեփականության իրավունքով պատկանող և ամրացված տրանսպորտային

միջոցների մասին տվյալների մուտքագրման անընդհատությունը և գրանցամատյանում պարունակվող տվյալների համադրելիությունը հաշվառման ու վերահսկման այլ տեղեկատվական համակարգերի տվյալների հետ:».

2) որոշմամբ հաստատված կարգի՝

ա. 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Պետական էլեկտրոնային հաշվառման տարրեր են հանդիսանում սեփականության իրավունքով պետությանը պատկանող շարժական (բացառությամբ դրամական միջոցների) և անշարժ գույքը (բացառությամբ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների), այդ թվում՝ միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ճանապարհները, արհեստական կառույցները, ճանապարհային կահավորանքն ու ճանապարհային մաս հանդիսացող այլ շինությունները, պետական մարմինների, մարզպետի աշխատակազմի, պետական մարմինների և մարզպետի աշխատակազմի ենթակայության պետական մասնակցությամբ առևտրային և պետական ոչ առևտրային կազմակերպություններին (այսուհետ՝ կազմակերպություններ) ու հիմնադրամներին (այդ թվում՝ որոնց հիմնադրի, ինչպես նաև լիազորված պետական մարմնի լիազորությունները փոխանցվել են Երևանի քաղաքապետին) անհատույց օգտագործման իրավունքով հանձնված անշարժ և շարժական գույքը, ինչպես նաև կազմակերպություններին և հիմնադրամներին սեփականության իրավունքով պատկանող անշարժ և շարժական գույքը՝ այդ թվում՝ տրանսպորտային միջոցները, պետական մարմինների հաշվեկշռում հաշվառված մտավոր սեփականության օբյեկտները, իրավաբանական անձանց (այդ թվում՝ որոնց հիմնադրի, ինչպես նաև լիազորված պետական մարմնի լիազորությունները, որպես պատվիրակված լիազորություն, փոխանցվել են Երևանի քաղաքապետին) կանոնադրական կապիտալում պետական բաժնեմասը (բաժնետոմսերը), այլ պետություններում գտնվող (այդ թվում՝ դիվանագիտական առաքելությունների համար օգտագործվող)՝ Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող գույքը:»,

բ. 5-րդ կետում «Ընդ որում, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի N 1093-Ն և 2017 թվականի փետրվարի 16-ի N 192-Ն որոշումների՝ պետական կառավարման համակարգի մարմինների (այսուհետ՝ պետական մարմիններ) միջև «Փոխգործելիության»

հարթակի շրջանակներում հասանելիությունն ապահովվում է բացառապես «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» փակ բաժնետիրական ընկերության միջոցով:» բառերը փոխարինել «Ընդ որում, պետական մարմինների և մարզպետի աշխատակազմի միջև «Փոխգործելիության» հարթակի շրջանակներում հասանելիությունն ապահովվում է բացառապես «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» փակ բաժնետիրական ընկերության միջոցով:» բառերով,

գ. 6-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունում «(շենք (առանձին կանգնած կամ ստորաբաժանված)» բառերը փոխարինել «(շենք, այդ թվում՝ ստորաբաժանված)» բառերով, «(մարզը, համայնքը, քաղաքը, գյուղը)» բառերը՝ «(մարզը, համայնքը, բնակավայրը)» բառերով, «ավարտվածության աստիճանը (մինչև 50%, 50%-ից մինչև 100%, 100%),» բառերը՝ «ավարտվածության աստիճանը (0-50 տոկոս (ներառյալ), 51-80 տոկոս (ներառյալ), 81 տոկոս և ավելի)» բառերով, «շենքի, շինության շահագործման հանձնման տարեթիվը» բառերը՝ «շենքի, շինության կառուցման տարեթիվը» բառերով, «անշարժ գույքի վթարայնության աստիճանը» բառերը՝ «անշարժ գույքի վնասվածության աստիճանը» բառերով, «կադաստրային արժեքը» բառերը՝ «շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը» բառերով և «(վարձակալություն, սերվիտուտ, գրավ և այլն)» բառերից հետո լրացնել «անշարժ գույքի հիմնանորոգման աշխատանքների իրականացված լինելը» բառերով,

դ. 6-րդ կետի 4-րդ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «է» պարբերությամբ.

«է. հաշվեկշիռ ընդունելու ամսաթիվը, ամիսը, տարեթիվը.»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

26.05.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ